# ՊԱՇՏՈՆԱԿԱՆ

## Ն.Ս.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՇՆՈՐՀԱՎՈՐԱԿԱՆ ՈՒՂԵՐՁԸ ՀԱՂԹԱՆԱԿԻ, ԼՂՀ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԲԱՆԱԿԻ ԵՎ ՇՈՒՇԻԻ ԱԶԱՏԱԳՐՄԱՆ ՕՐՎԱ ԱՌԻԹՈՎ

**Մայր Աթոռ Ս. Էջմիածին, Տեղեկատվության համակարգ, 8 մայիսի 2001 թ.:**

Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Կաթողիկոսը հետևյալ շնորհավորական ուղերձն է հղել Մայիսի 9-ի Հաղթանակի, ԼՂՀ պաշտպանության բանակի և Շուշիի ազատագրման օրվա փոնական առիթով:

«Բերկրաշատ հոգով ողջունում, շնորհավորում և Հայրապետական մեր օրհնությունն ենք բերում հանուր մեր ժողովրդին՝ Հաղթանակի, ԼՂՀ պաշտպանության բանակի և Շուշիի ազատագրման Օրվա փոնական առիթով:

Արդարության ու ազատության հաղթանակի բերկրանքով են համակված մեր բոլորի հոգիները, և մեր աղոթքը այսօր խաղաղության հայց է առ Աստված:

Սիրելիներ. ազատության սերը և խաղաղության երազը ամենաթանկ արժեքներից են, որ ժառանգություն ենք ստացել մեր նախնիներից: Հայաստանի և Արցախի անկախության հռչակման 10-րդ տարում, երբ ազգս այսօր Հայոց Մեծ Դարձի 1700-ամյակի խորհրդով հոգևոր նորոգության օրեր է ապրում, հրավեր, հորդոր ու պատգամ ենք ուղղում մեր բարեպաշտ զավակներին՝ վերստին լցվել լավատեսությամբ, հավատավոր հոգու նոր զորությամբ և ութսունության միաբանության ոգով ծառայել ամենուր հայրենական մեր կյանքի վերաշինության ու Հայրենիքի վերածննդի նվիրական առաքելությանը:

Թող Բարձրյալն Աստված օրհնի ստեղծագործ ջանքերը մեր ժողովրդի, անկոտրում պահի ոգին ու բազուկը հայրենյաց պաշտպան մեր զավակների՝ հանուն ազատ և անկախ Հայաստանի ու Արցախի խաղաղ, բարգավաճ ու բարօր կյանքի:

Թող Տերը խաղաղություն սփռի աշխարհին համայն և զորացնի համերաշխությունը պետությունների ու ժողովուրդների»:

# ԳԱՐԵԳԻՆ Բ ԿԱԹՈՂԻԿՈՍ. «ՄԵՐ ԱՂՈԹՔՆ Է, ՈՐ ՆՊԱՍՏԵՆՔ ՄԵՐ ԺՈՂՈՎՈՒՐԴՆԵՐԻ ԲԱՐԵԿԱՄՈՒԹՅԱՆԸ»

## ԼԻԲԱՆԱՆԻ ՆԱԽԱԳԱՀՆ ԱՅՑԵԼԵՑ ՄԱՅՐ ԱԹՈՌ Ս. ԷՋՄԻԱԾԻՆ

**Մայր Աթոռ Ս. Էջմիածին, Տեղեկատվության համակարգ, 3 մայիսի 2001 թ.:**

Այսօր Հայաստանում պետական այցով գտնվող Լիբանանի Հանրապետության նախագահ, գեներալ Էմիլ Լահուդը փիկնոջ և ուղեկից շքախմբի հետ այցելեց Մայր Աթոռ Ս. Էջմիածին՝ հանդիպելու Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսին:

Նորին Սրբությունը ողջունեց պատվարժան հյուրի այցը հայոց հոգևոր կենտրոն՝ առանձնակի գոհունակությամբ նշելով երկու ժողովուրդների դարավոր բարեկամությունը:

Ի հաստատումն ասվածի՝ Լիբանանի նախագահը փաստեց, որ հայերը, որպես Լիբանանի լիարժեք քաղաքացիներ, իրենց կարևոր ներդրումն ունեն երկրի կյանքում:

«Մեր աղոթքն է, որ նպաստենք մեր ժողովուրդների բարեկամությանը»,- ասաց Վեհափառ Հայրապետը:

Հանդիպման ընթացքում խոսվեց Հայաստանում քրիստոնեությունը պետական կրոն հռչակելու 1700-ամյա հոբելյանական տոնակատարությունների մասին, Նորին Սրբությունը ներկայացրեց Հայ Եկեղեցու գործունեությունը:

«1700-ամյակը մեծ իրադարձություն է աշխարհում, և վստահ ենք, որ շատ լիբանանահայեր մասնակից կլինեն այդ տոնախմբություններին», - ասաց գեներալ Էմիլ Լահուդը:

Հայ Եկեղեցու նշանակալի հոբելյանը մեծ շուքով կտոնախմբվի նաև Լիբանանում, որտեղ գտնվում է Հայ Եկեղեցու նվիրապետական Աթոռներից Մեծի Տանն